



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

**N 830-Ա**

**05.10.2020 թ.**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 11-րդ կետի 22-րդ և 19-րդ կետի 20-րդ ենթակետերը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 39-Լ հրամանով հաստատված հավելված 1-ի 5-րդ կետը՝

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Արցախի հերոսներ՝ Դավիթ Լյովայի Գրիգորյանի, Էդգար Էդվարդի Մարկոսյանի, Յուրա Հայկարամի Ալավերդյանի, Դավիթ Վանիկի Ղազարյանի (հետմահու) և Սերգեյ Սլավիկի Շաքարյանի մեջ քաղաքացիական բարձր պատասխանատվություն և հայրենասիրություն սերմանելու և հանուն Հայրենիքի անձնազոհության որակներ փոխանցելու համար և «Ուսուցչի օրվա» կապակցությամբ Արմավիրի մարզի «Սարդարապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին, «Երևանի թիվ 78 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, «Երևանի Թ. Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին, «Երևանի Լ.Արիսյանի անվան թիվ 127 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին, «Երևանի թիվ 150 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին, «Երևանի Ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին, Արարատի մարզի «Վեդու թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին և ԱՀ Ղուզե Ճարտարի Արա Ավանեսյանի անվան դպրոցին պարգևատրել **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մեդալով:**

**Նախարար**

**Ա. Հարությունյան**

**X**